Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2023 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է Մասիսի համայնքապետարանի և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի միջև համագործակցության նոր ծրագրի իրագործմամբ և համայնքում ծագած որոշ խնդիրների լուծմամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համաձայն 13.06.2023 թվականին Մասիսի համայնքապետարանի և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի միջև կնքված պայմանագրի հիմնադրամը Մասիս խոշորացված համայնքում իրականացնելու է կոմունալ ծառայությունների բարելավման և արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագիրը համայնքի մասնակցությամբ: Ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 504 192 000 դրամ, որից համայնքի դրամական ներդրումը կազմում է նախահաշվային արժեքի 5%-ը՝ այն է 25 209 600 դրամ:

2022թ. ձեռք բերված Դարակերտ գյուղի վարչական շենքի սանհանգույցի հիմնանորոգման և ջրագծի անցկացման աշխատանքի նախագծանախահաշվային փաթեթով կատարվել է գնման գործընթաց, որի արդյունքում կնքված պայմանագրով աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 2 861 000 հազար դրամ:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

հ/հ	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Ծախսեր /հազար դրամներով/*
				Ծախսեր		
1	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Պարգևատրում	4112	-25209,6
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ.** Այլ կապիտալ դրամաշնորհ	4657	25209,6

3	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Վարչական սարքավորումներ	**5122**	-2861,0
4	**01**	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Դարակերտ գյուղի վարչական շենքի սանհանգույցի հիմնանորոգման և ջրագծի անցկացման աշխատանքներ	**5113**	2861,0
				Ընդամենը		***0***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՒՅՍԱՆՅԱՆ